Կանայք ընդհանրապէս գեղեցիկ են. ունեն առողջ կազմուածք, լայն և զարգացած կուրծք, գեղեցիկ գծագրութիւն, կլոր և սև աչքեր, շնորհալի յօնքեր և երկար մազեր։ Նրանք առհասարակ ուշիմ, աշխատասէր և տնարար են ու մինչև անգամ մարդկանց աշխատութեան ևս մասնակցում են։ Թէ տղամարդիկ և թէ կանայք ապրում են 70—80, մինչև իսկ 100 տարի։

Կրօն եւ եկեղեցի: Ընդհանրապէս վերին աստիճանի կրօնասէր և եկեղեցասէր ժողովրդ է Փէրիայի հայ գիւղացիութիւնը. նրանք բոլորն էլ համարեա առանց բացառութեան հայ լուսաւորչականներ են, այսինքն պատկանում են, ինչպէս իրենք են ասում «Հայաստանեայց առաքելական եկեղեցուն»։ Շատ ամուր են իրենց հաւատի մէջ և առանձին երկիւղածութեամբ են վերաբերւում դէպի իրենց եկեղեցին. գրեթէ գիւղ չես պատահի, որ չունենայ մի եկեղեցի, թէև այդ եկեղեցիները ներսից այնքան անշուք են, որքան և դրսից. նրանց բոլոր զարդը կազմում են մի քանի աշտանակներ և մի քանի պատկերներ ու զգեստներ, իսկ գետինը փռուած է մի քանի կտոր փալաս-փուլուսներ։ Բայց առանձնապէս նշանաւոր են Բոլորանի, Նամակերտի, Սանգիբարանի, Վերին Խոյգանի և Ղառղունի եկեղեցիները։ Այժմ ամբողջ գաւառում կան 31 կանգուն եկեղեցիներ. համարեա բոլոր եկեղեցիներն էլ ունեն իրենց քահանաները, բացառութիւն են կազմում միայն մի քանի փոքրիկ գիւղերը, նրանք էլ օգտւում են մօտակայ գիւղերի քահանաներից։ սակայն, պէտք է խոստովանել, որ Փէրիայի բոլոր քահանաներն էլ իրենց մտաւոր կարողութեամբ ու զարգացմամբ շատ ողորմելի են, բացի մի-երկուսից։ Իբրև նահապետական ժողովուրդ՝ Փէրիայի հայերը սրբութեամբ պահում են Զորեքշաբթ. և Ուրբաթ օրւայ պասերը և թէ այլ տեղական սովորութիւնները, բացի այդ հաւատում են բազմաթիւսրբերի, որոնց ամեն տարի ուխտի են գնում։

Զբաղմունք, արհեստներ: Գաւառի բնական պայման-